ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Գայանե Մկրտչյան

«ԿԶՆԱԿ» հիմնադրամի Հանրակրթության պետական
չափորոշչի և ուսումնական ծրագրերի բաժնի պետ
Այբ դպրոցի ուսուցիչ, մանկ. գիտ.-երի թեկնածու

Պարզվում է, որ երբ անտառում կտրում են որևէ ծառ, հարևան ծառի երակները սեղմվում են. սրանից հետևում է, որ անգամ անշունչ իրերը անհաղորդ չեն կողքինի ցավին: Ուրեմն՝ նրանք ևս ունեն իրենց ճակատագիրը, և այդ ճակատագիրը միայն իրենցը չէ, այն կախված է տարբեր առարկաների փոխհարաբերությունից: Ահա այս արտաքինից չերևացող ցավն է, որ դառնում է գրականություն: Եվ նրա խնդիրն է ցույց տալ անտեսանելին, մարդու և նրան շրջապատող մակրո և միկրոաշխարհների միջև եղած կապը, տեսնելու կտրված ծառին շրջապատող ծառերի ապրումները և փոխանցելու մեզ:

Ամեն օր մենք լսում ենք նյութական բազմաթիվ կորուստների մասին, որոնք բծախնդրորեն հաշվվում են և թվարկվում: Իսկ հոգևո՞ր կորուստները: Ոչ մի գիտություն չի զբաղվում և չի կարող զբաղվել դրանով, բացի գրականությունից, որովհետև գրականությունը հոգու բնությունն է խնամում: Հոգին նման է բույսի և ոչ թե կավի: Չէ՞ որ կավը չի աճում, նա իր ձևը ստանում է՝ դրսից ընդունելով անհրաժեշտ նյութեր: Բույսի բնությունն այլ է. այն ձևավորվում է՝ ապավինելով իր ներքին ուժերին, ներսից ստանալով աճն ապահովող լիցքեր: Եվ ինչպես բույսին է անհրաժեշտ պարարտ հող, ջուր և լույս, այնպես էլ՝ հոգուն: Եվ դա վերապահված է ուսուցչին, նրա՝ լույսով ողողված խոսքին, որը ապրող, կենդանի, թրթռուն բառերի շքահանդես է դարձնում դասաժամը:

Ժամանակները փոխվել են, այս սերնդի և մեր միջև եղած կապը գնալով բարակում է և չկորցնելու համար ամեն օր պետք է հիշել, որ որդիներն այլևս ոչ այնքան իրենց հայրերին են նմանվում, որքան իրենց ժամանակին: Ու այսօր անչափ կարևոր է, թե ում են ուզում նմանվել մեր աշակերտները, ում են նմանակում, ինչու և ինչպես: Ինձ միշտ թվացել է, որ նմանակումը նման է շնչառության. որևէ բանից կամ մեկից ստացած տպավորությունը նման է

ներշնչանքի, իսկ արդեն նմանակումը՝ արտաշնչման: Ուրեմն՝ ինչպե՞ս անել, որ մեր աշակերտները կրկնեն՝ առանց կրկնվելու. այստեղ է ահա, որ բացվելու են նրանց ինքնատիպ շերտերը:

Մեր մանկավարժական ***պիտի*** -ն համընկնո՞ւմ է աշակերտական ***ուզում եմ*** –ին: Ուղի՞ղ, թե՞ հակադարձ համեմատական են դրանք իրար: Համոզի՞չ է մեր խոսքը, այն հարո՞ւստ է օրվա, կարդացած գրքի, հոդվածի մասին ունեցած տպավորություններով. մեր ապրածն ու զգացածը հումք դարձնո՞ւմ ենք հաջորդ դասի համար, թե՞ մեխանիկական կրկնությամբ դասաժամն ենք լցնում: Գրականության դասը կոչված է աշխատելու ոչ միայն մտքի հետ, այլ և ավելի՝ սրտի… Եթե կարճ ձևակերպեմ՝ ուսուցիչը հենց դասն է՝ իր լռությամբ, աշխատեցնելու իր կարողությամբ, աննկատ մնալու իր համբերությամբ, զարմացնելու և հուզելու իր նախանձելի ձիրքով:

Մենք, գնալով դեպի մեր աշակերտները, քայլում ենք դեպի մեզ, քանզի օգնելով նրանց՝ կայանալու որպես անհատներ, օգնում ենք ինքներս մեզ՝ կայանալու որպես ուսուցիչ: Ու այս ճանապարհը մենք անցնում ենք՝ ամեն աշակերտի տալով այնքան, ինչքան նա զորու է իր հետ տանելու՝ երազելով, որ մեր տված դասը վերածվի կրթության:

Իմ կարծիքով, գրականության դասը կոչված է ոչ միայն հայացք ձևավորելու, այլև այն փոխելու: Երբ նոր ես մտնում գրականության աշխարհ, շաը կարևոր է, թե ինչպիսին կլինի հանդիպումը գրքի հետ: Ես լուռ զրուցում եմ աշակերտներիս հետ. «Տո՛ւր ինձ ձեռքդ, ի՛մ ընթերցող, ու ե՛կ քայլենք: Նե՛րս մտիր, մտի՛ր անշտապ և ուշադիր զննի՛ր շուրջդ: Եղի՛ր դատավոր, բայց փորձի՛ր նախ և առաջ հասկանալ. մերժելուց առաջ շատ կարևոր է հասկանալը: Քեզ ինչ-որ բան դուր չի՞ գալիս, քեզ համար հետաքրքիր չէ՞ այստեղ: Մի՛ շտապիր, ուրիշ գրքերում գուցե գտնես քեզ առավել հետաքրքրողը, կամ գուցե ընկալո՞ւմդ է սխալ. փորձի՛ր շարադրել, թե ինչը քեզ չի գոհացնում»:

Ես երբեք իմ աշակերտներին մենակ չեմ ուղարկում գրքի հետ հանդիպման: Հանկարծ ու «խրտնի» գրքից, և առաջին իսկ չկայացած հանդիպումը կարող է ճակատագրական լինել: Ամենակարևորը՝ գիրք կարդալն աշակերտիս համար դաս չպիտի լինի: Տեքստի վրա աշխատելիս ինչքան կարևոր է գտնել ավելորդը՝ նման

այն քանդակագործին, որն արվեստի գլուխգործոց է ստանում՝ անտաշ քարից պարզապես հեռացնելով ավելորդ մասերը: Սկզբում աշակերտներս ընդամենը տեսնում են: Քայլ առ քայլ սկսում ենք սովորել նկատել և ձևավորվում է ***հոգևոր տեսողություն***: Կարելի է ունենալ 2 աչք և ոչինչ չտեսնել: Չէ՞ որ գրականության աշխարհը ընկալվում է ոչ միայն աչքերով, այլև մտքերով, սրտով ու փորձով: Ես ջանում եմ, որ գրականության դասերին իմ աշակերտներն ունենան մտածող աչքեր, ու երբ ամփոփում ենք որևէ հեղինակի ստեղծագործություն, հաճախ դասս կառուցում եմ այնպես, որ աշակերտները հարցեր ուղղեն հեղինակին: Այո՛, հեղինակին: Ծնվո՞ւմ է հարցը, ուրեմն՝ բացվել է ճանապարհը դեպի գրականություն, այսինքն՝ դեպի մտածողություն: Այսպես օր օրի վրա, երբեմն էլ աննկատ, գրականության դասը վերածվում է մարդագիտության ու դառնում մանկավարժական ստեղծագործություն, ուր գլխավոր հերոսները ուսուցիչն ու աշակերտներն են հավասարապես: Նրանք այդ ստեղծագործական փուլում կանգնած են լույսի աղբյուրի ակունքներին:



Փորձեմ պատկերավոր ներկայացնել գրականության իմ դասը. այն ունի ***եղևնու*** տեսք: Պահելով ողնաշարը, հիմնական գիծը, ուղին, անընդհատ այս ու այն կողմ տարածվելով եմ բարձրանում: Իսկ երբ նոր էի սկսել, գրականության դասերս նման էին ***այան՝*** միագիծ, միայն դեպի վեր ընթացքով: Եղևնատիպ դասերս ավելի են օգնում հասկանալու ինձ, աշակերտներիս ու աշխարհը, և մեծանում, ընդարձակվում ու խորանում է մեր տեսադաշտը:

Այսպես ամեն դասից հետո ես անհամբեր սպասում եմ իմ հաջորդ դասին. ինչո՞ւ, որովհետև, եթե չի ստացվել, հաջորդ ժամին պիտի շտկեմ, իսկ եթե կայացել է, ուրեմն՝ առաջ քայլեմ: Իսկ վաղվա օրը գալու է՝ հաստատելու իմ այսօրը: Կընդունե՞ն իմ աշակերտներն ինձ վաղը, ինչպես այսօր, թե՞ ոչ: Եթե կընդունեն, ուրեմն ունեցել եմ 2 «այսօր». մեկն այն, ինչ

եղավ, մյուսն այն, որ կրկնվելու է: Ունենալու եմ նաև 2 «վաղը». մեկն այն, որով ապրում եմ արդեն այսօր, մյուսը՝ այն, որը սպասվում է ինձ:

Այսպես շարվում են օրերն իրար վրա, դառնում տարիներ, և մենք՝ մանկավարժներս, ջանում ենք ապահովել մեր երկարակեցությունը: Իսկ դրա երաշխիքն այն է, որ ամեն օր ոչ թե մտնենք դասարան, այլ.... Հայտնվենք այնտեղ, ու սկսվի տոնը, որը միշտ մեզ հետ է ու կոչվում է Գրականություն: